

**ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ****ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ**

**ՀԱՆՐԱՔՎԵՒ, ՈՐՊԵՍ ԱՆՄԻՋԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱԻՆԱՌԻԹՅԱՆ ԶԵՎԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԿԸ**

Հոդվածում հեղինակը առաջ է քաշում հանրաքվեի, որպես իրավական ինստիտուտի արդյունավետության ու գործունության հիմնական իրավական չափանիշները, դրա հիման վրա կառուցում է հանրաքվեի «փետական մոդելը՝ հանրաքվեի տարրերակ», որում հանրաքվեի բովանդակությունը կազմող հիմնական իրավական չափանիշները դրսորված են առավել լրիվությամբ։ Այդ չափանիշները հնարավորություն են տախս հանրաքվեի հնատիտուտի փետական մոդելի հատկանիշների դրսորումը չափել իրական մոդելի վրա, ախտորոշել դրա արդյունավետության և որպես իրավական ինստիտուտի գործունության աստիճանը, նախանշել ինստիտուտի կատարելագործման սահմանադրական-օրենսդրական ուղիները։

**Հիմնարարեր՝ հանրաքվե, արդյունավետություն, իրավական մոդել, իրական մոդել, իրավական չափանիշ, ինսախառափառություն, դեկարասախվարդական կարգավորում։**

Հանրաքվեի, որպես խիստ տարողունակ իրավական ինստիտուտի համարի հետազոտությունը ենթադրում է լայն շրջանակներով ու ուղղություններով ուսումնասիրություն և վերլուծություն իրականացնելու անթաքույց անհրաժեշտություն։ Նախ, նպատակահարմար է կատարել ինստիտուտի բովանդակային տարրերը կազմող նորմերի մանրագնին վերլուծությունը, ինչը հնարավորություն կտաքացահայտելու դրանք ընթացիկ օրենսդրությամբ իրացնելու սահմաններն ու ամրագրելու իրավական եղանակները։ Միաժամանակ, հետազոտությունը հարկ է իրականացնել՝ այդ ինստիտուտի կիրառման եղանակները կանխորոշող հիմնական չափանիշների ընտրության և դրանց բովանդակությունը հստակեցնելու միջոցով։

Ցուրաքանչյուր երկրում, իրավական համակարգի և իրավական մշակույթի զարգացման պատմաքաղաքական առանձնահատկություններից ելնելով՝ ամրագրվում է հանրաքվեի սահմանադրական-իրավական որոշակի տեսլական, որի կառուցվածքային-ընթացակարգային բովանդակային ձևը, ըստ հանրաքվեի տեսաբանների՝ ներառում է առնվազն երկու էական տարրեր՝

ա) կառուցվածքային հատվածը, որպես օրենսդրությամբ նախատեսված հանրաքվեի ինստիտուտի կիրառման տեսականորեն հնարավոր իրավիճակների իրացման համակարգ,

բ) բովանդակային հատված, որպես իրավական չափանիշների ամբողջություն, որի հիման վրա կարող են վեր հանվել հանրաքվեի ինստիտուտի կիրառման յուրաքանչյուր տեսականորեն հնարավոր իրավիճակների անհատականացման հատկանիշները<sup>1</sup>։

Եթե վերլուծության է ենթարկվում տվյալ պահին գործող, Սահմանադրությամբ կամ օրենսդրությամբ ամրագրված հանրաքվեի տեսլականը, ապա այդ իրավական ինստիտուտի վերլուծությունը կարող է տարվել արդիականության քաղաքական-իրավական հրատապ հիմնահարցերի համատեքստում։ Այսիսկ է բերևս Գ. Դանիելյանի «Հանրաքվեի, որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները» հոդվածը (2014 թ.), որում հեղինակը 2015 թ. սահմանադրական բարեփոխումների նախաշեմին բարձրացրել է հանրաքվեի իրավական ինստիտուտի սահմանադրական և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարրերակներ<sup>2</sup>։ Դրանում արտացոլված մոտեցումները, մեր կարծիքով, լինելով սահմանադրական բարեփոխումների ուղենիշ, միաժամանակ կարող են որոշակիորեն պիտանի լինել հանրաքվեի արդի տեսլականը վերլուծելիս, սակայն երկայում աննախադեպ գիտագրործնական նշանակություն են ձեռք բերել ոչ միայն հայեցակարգային, այլև սահմանադրական հիմնադրույթների իրացմանն առնչվող խնդիրները։

Հանրաքվեի իրավական ինստիտուտին նվիրված գրականության մեջ ուշագրավ է Գ.Վ. Սինցովի մոտեցումը, որի կարծիքով՝ օրենսդրությամբ նախատեսված հանրաքվեի յուրաքանչյուր ընթացակարգ կարող է զնահատվել միայն դրա կոնկրետ հատկանիշների յուրահատուկ ամբողջության հստակեցման՝ հիմք ընդունելով հետևյալ իրավական չափանիշները՝

ա) հանրաքվեի անցկացման մակարդակը,

բ) հանրաքվեի անցկացման պարտադիրու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունը,

զ) հանրաքվեի անցկացման առարկան, այսինքն՝ հարցերի այն շրջանակը, որոնք կարող են հանվել համաժողովրդական քվեարկության,

դ) հանրաքվեի արդյունքների իրավական նշանակությունը,

ե) հանրաքվեի անցկացման ընթացակարգի նախաձեռնողը : Լիովին կարելի է համաձայնվել Գ.Վ. Սինցովի այն տեսակետի հետ, որ հանրաքվեի իրավական ինստիտուտի թվարկված հատկանիշների համակարգը հիմք է տալիս որոշելու հանրաքվեի ինստիտուտի արդյունավետությունը և իրական գործունակությունը :

Նշված ձևաչափը հարմար է ցանկացած երկրում հանրաքվեի ինստիտուտի մոդելի վերլուծության, արդյունավետության ու գործունության զնահատման համար, հատկապես, արդեն կայացած ժողովրդավարությամբ, ժողովրդափաշխանության անմիջական և ներկայացուցական ձևերի հավասարակշռված զուգորդմամբ խառը կառավարման համակարգ ունեցող երկրների համար, որոնցում հանրաքվեն օրինաչափորեն տարածված երևոյթ է: Սակայն, կոնկրետ երկրի պետական իրավական համակարգի ձևակորման ու զարգացման պատմական առանձնահատկությունները, քաղաքական, օրենսդրական գործուները կարող են առաջ մղել հանրաքվեի ինստիտուտի բովանդակային, ինչպես նաև ձևական այլ չափանիշները: Եթե կայացած ժողովրդավարական երկրներում այդ չափանիշները մշակվելով տասնամյակների ընթացքում, ձեռք են բերել հանրաքվեի արդյունավետությունն ու գործունությունն ապահովող օրենսդրությամբ ամրագված ցուցանիշների արժեք ու նշանակություն, ապա չկայացած ժողովրդավարության երկրներում այդ ցուցանիշներն իրենց թերի կարգավորումներով կարող են նվազեցնել հանրաքվեի ինստիտուտի գործունությունը, ժողովրդավարականության աստիճանը:

Երրորդ հանրապետության սահմանադրական կարգավորման փորձի հաշվառմամբ, ՀՀ պայմաններում այդպիսի չափանիշ է դառնում կարգավորման նորմատիվ ձևը՝ Սահմանադրությունը, թե՝ օրենքը: Սահմանադրության պարագայում կարեղ նշանակություն ունի հանրաքվեի իմբնական չափանիշների, սկզբունքային հարցերի հիմունքների ամրագրումը: Եթե դրանք չեն ունենում պատշաճ բովանդակային սահմանադրական ամրագրում, ապա այդպիսի սահմանադրական կարգավորումը ստեղծում է ընթացիկ օրենսդրության միջոցով հանրաքվեի ինստիտուտի խեղարյուրման վտանգ: Այդ պատճառով հանրաքվեի ինստիտուտի իրա-

վական կարգավորման նորմատիվ ձևն անհրաժեշտ է ներառել հանրաքվեի ինստիտուտի բովանդակությունը գնահատող իմբնական իրավական չափանիշների շարքում:

Հանրաքվեի իրավական ինստիտուտի կարեւոր և արդիական խնդիրներից է հանրաքվեի քվորումի և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակի հարցը: Հասկանալի է, որ հանրաքվեի համար անհարկի մեծ շեմ սահմանելը հղի է այն ձախողելու վտանգով, սակայն, մյուս կողմից, անհամենատ ցածր շեմը չի կարող համարժեք դիտարկել, որպես անմիջական ժողովրդափաշխանության դրսուրում:

Վերոհիշյալ տեսանկյունից, առաջարկվում է հստակեցնել հանրաքվեի դրված հարցով որոշումն ընդունված համարելու համար անհրաժեշտ ձայների քանակը: Եթե հանրաքվեի արդյուքում ընդունվող որոշումը հավաքել է ընտրական իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի ձայների 35 տոկոսը, և դրանով որոշումը համարվում է ընդունված, ապա ժողովրդափաշխանության մասին խոսելը թերևս վիճակարույց է: Հասարակության մոտ մեկ երրորդի կողմից պարտադիր իրավական ակտի կամ այլ լուծման ընդունումը չի կարելի համարել բնականոն, ժողովրդավարական լուծում: Այդպիսին կարող է լինել այն որոշումը, որն ընդունվում է ձայնի իրավունք ունեցող անձանց գոնե 50 տոկոսի աջակցության դեպքում: Հետևաբար, այս հարցում անհրաժեշտ է ապահովել պատշաճ սահմանադրական և ընթացիկ օրենսդրական կարգավորում: Իհարկե, համարժեք գնահատելով առանձին հարցերի ըննարկման ու դրանց առնչությամբ միասնական կամքի բացահայտման անհրաժեշտությունը, կարելի է սահմանել ձայների նվազագույն շեմի տարրերակված չափանիշներ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի, որպես ժողովրդափաշխանության անմիջական ձևի՝ արդյունավետությունը, գործնականությունը, ժողովրդավարության աստիճանն ապահովող ցուցանիշներ են՝

ա) հանրաքվեի անցկացման մակարդակները,  
բ) հանրաքվեի անցկացման պարտադիրությունը,

գ) հանրաքվեի անցկացման առարկան,  
դ) հանրաքվեի արդյունքների իրավական նշանակությունը,

ե) հանրաքվեի նախաձեռնող սուբյեկտների շրջանակը,  
զ) հանրաքվեի ինստիտուտի իրավական կարգավորման նորմատիվ աղյուրը,

է) հանրաքվեի քվորումի և որդշան ընդունման անհրաժեշտ ձայների քանակը:

Ինչպես հայտնի է, ըստ անցկացման մակարդակի (տեղի) հանրաքվեները լինում են *համապետական (ազգային) և տեղական (լոկային)*: Համապետական հանրաքվեներին մասնակցում են երկրի բնակչության ընտրական ձայնի իրավունք ունեցող քաղաքացիները: Տեղական հանրաքվեներն անցկացվում են վարչատարածքային միավորների (դաշնային պետություններում՝ դաշնության սուբյեկտի), ինչպես նաև, այսպես կոչված տարածաշրջանային մակարդակներով<sup>7</sup>: Վերջինը մի քանի վարչատարածքային միավորումներում անցկացվող հանրաքվեներ են: Տեղական հանրաքվեներում լուծվող հարցերի շրջանակի մեջ մտնում են վարչական տարածների սահմանների, տեղական հարկերի և տուրքերի հարցերը:

Հանրաքվեի, որպես անմիջական ժողովրդականության ձևի արդյունավետության իրավական չափանիշ է անցկացման պարտադիրությունը<sup>8</sup>: Ըստ „անցկացման եղանակի հանրաքվեները բաժանում են պարտադիր և լրացուցիչ (Փակուլտատիվ)“ տեսակների<sup>9</sup>: Պարտադիր հանրաքվեներն անցկացվում են օրենքով սահմանված կարգին համապատասխան, հստակ որոշված հարցերի շրջանակով, հատուկ նախատեսված դեպքերում: Դա նշանակում է, որ հարցերի այդ շրջանակը չի կարող լուծվել այլ կերպ, բացի հանրաքվեից: Օրինակ, ՀՀ 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կարող է քոփոխվել միայն հանրաքվենվ: Սահմանադրության ընդունման կամ փոփոխման կապակցությամբ պարտադիր հանրաքվեներ նախատեսված են մի շաք պետություններում<sup>10</sup>: Այս դեպքում օրենսդրի իրավունքը պատկանում է միայն ժողովրդին, իսկ պետական ներկայացուցչական և այլ մարմններն այդ գործընթացում կատարում են միայն նախապատրաստող, առաջարկող դեր: Հանրաքվեի դրված հարցի լուծողն այս դեպքում քերարկողների զանգվածն է, ինչն անմիջական ժողովրդականության բարձրագույն դրսնորումն է:

Լրացուցիչ հանրաքվեի միջոցով քերարկվող հարցի լուծման կարգում առկա է երկրնարանը: Այդ հարցը կարող է լուծվել նաև պետական մարմնների միջոցով, սակայն կոնկրետ քաղաքական-իրավական իրադրության մեջ հարցը, որի լուծումը հանրաքվեի միջոցով արգելված չէ, դրվում է հանրաքվեի (ազգային կամ տեղական)՝ հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտի որոշմամբ: Եթե հանրաքվեի օրենսդրական կամ սահմանադրական կարգավորման մոդելում նախատեսված է միայն լրացուցիչ հանրաքվե, որի նախաձեռ-

նության իրավունք ունեն միայն հանրային իշխանության մարմինները, այսինքն՝ քաղաքացիները կամ դրանց խմբերը բացառված են հանրաքվե նախաձեռնելու սուբյեկտների շրջանակից, ուրեմն հանրաքվեի ինստիտուտն անարդյունավետ է: Հանրաքվեի ինստիտուտի այդպիսի մոդելը չի կարող համարվել ժողովրդականության գործուն միջոց, կատարել իր՝ որպես անմիջական ժողովրդակարության ձևի առաքելությունը: Այն այս պարագայում վերածվում է հանրային-իշխանական կառավարմանը լրացնող այլնարանքային ձևի, որին շատ դեպքերում դիմում են ամբոխավարական շարժադրիներից ենելով: Այս հարցում սկզբունքուն չպետք է համաձայնվել Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմանը, ըստ որի՝ նպատակահարմար չէ սկզբունքային հարցերով հանրաքվեները դարձնել պարտադիր, քանզի դրանք կարող են էապես կաշկանդել պետական քաղաքականությունը<sup>11</sup>:

*Ըստ անցկացման առարկայի՝ հանրաքվեները բաժանվում են իրավաստեղծ և այլ հարցեր լուծող տեսակների: Իրավաստեղծ հանրաքվեներն իրենց հերթին բաժանվում են սահմանադրականի և օրենսդրականի<sup>12</sup>:* Այլ հանրաքվեները տեսարանները բաժանում են՝

ա) *պլերիսցիտային հանրաքվեների* (միջազգային պայմանագրեր կնքելու, միջազգային կազմակերպություններին միանալու, տարածքային, ինչպես նաև պաշտոնատար անձին կամ պետական մարմնին անվտանգություն հայտնելու հարցերով),

բ) *միջազգային-իրավական*, երբ լուծվում են միջազգային կարևոր հարցեր,

գ) *վարչական-իրավական*, երբ լուծվում են կառավարչական բնույթի հարցեր (օրինակ՝ վարչական-տարածքային բաժանման կամ դաշնության սուբյեկտի սահմանների փոփոխության, պաշտոնատար անձանց լիազորությունների դադարեցման)<sup>13</sup>:

Իրավաստեղծ հանրաքվեներն անցակցվում են ինչ-որ իրավական ակտի ընդունման համար: Եթե դա երկրի իիմնական օրենքն է, ապա հանրաքվեն սահմանադրական է, իսկ եթե հանրաքվեի առարկան օրենք է կամ այլ իրավական ակտ, ապա հանրաքվեի միջոցով ընդունվում է օրենք, տեղական ինքնակառավարման ակտ, այլ նորմատիվ իրավական ակտ: Օրենսդրական հանրաքվեի տարատեսակներ են մերժողական կամ հաստատող հանրաքվեները: Մերժողական կամ «ժողովրդական վետո» կոչված հանրաքվեով լրիվ կամ մասնակիորեն վերացվում է ընթացիկ օրենքը<sup>14</sup>: Հա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տատող հանրաքվեով վավերացվում է օրինագի-  
ծը<sup>15</sup>:

**Հանրաքվեի արդյունքների իրավական նշա-  
նակությունը, այլ կերպ ասած «քննունված որոշ-  
ման իրավական ոժը» ևս այդ իրավական ինստի-  
տուտի արդյունավետության չափանիշներից է<sup>16</sup>:**  
Ըստ այդ հատկանիշի հանրաքվեները լինում են  
որոշիչ (իմպերատիվ) և խորհրդատվական<sup>17</sup>: Որոշ-  
իչ հանրաքվեի միջոցով կայացված որոշումն ունի  
վերջնական և պարտադիր իրավական ուժ<sup>18</sup>: Այդ  
որոշումները լրացուցիչ հաստատման կարիք չու-  
նեն և, որպես կանոն, կարող են փոխվել (չեղյալ  
հայտարարվել) միայն հանրաքվեով:

Պետք է նկատի ունենալ, որ խորհրդատվա-  
կան հանրաքվեն, որպես ժողովրդի կարծիքի վեր  
հանման միջոց, ինչպես տեսական գրականության  
մեջ, այնպես էլ գործնական իրավակիրառական  
պրակտիկայում երբեմն գնահատվում է բացասա-  
կան, միջոցների և ջանքերի անհմաստ ծախս<sup>19</sup>:

**Հանրաքվեի, որպես ժողովրդավարական ինս-  
տիտուտի անմիջական ժողովրդաիշխանության  
ձևի էական հատկանիշներից է հանրաքվեի անց-  
կացման նախաձեռնող-սուրյեկտի հիմնահարցը:**  
Հանրաքվեի այն տեսակը, որի նախաձեռնողը քա-  
ղաքացիների խումբն է, ընդունված է անվանել  
հանրագրային (պետիցիոն) հանրաքվե<sup>20</sup>: Հանրա-  
յին մարմիններից համապետական հանրաքվե  
նշանակելու իրավունքը վերապահված է պետու-  
թյան գլխին (Ֆրանսիայում) կամ խորհրդարանին  
(Բուլղարիայում): Հանդիպում են սահմանադրա-  
կան լուծումներ, երբ հանրաքվե նշանակելու իրա-  
վունքը ունեն և պետության գլուխը և խորհրդարանը  
(Աղքաղացան): Որոշ երկրներում հանրաքվեի անց-  
կացման նախաձեռնող սուրյեկտներ են պատգա-  
մավորական խմբերը, խորհրդարանի պատգամա-  
վորների որոշակի քանակը, իսկ դաշնային պետու-  
թյուններում դաշնության սուրյեկտները<sup>21</sup>:

Հանրագրային, այսինքն՝ քաղաքացիների նա-  
խաձեռնությամբ անցկացվող հանրաքվեն էակա-  
նորեն բարձրացնում է հանրաքվեի դերը կառա-  
վարման համակարգում, ստեղծում է էական հա-  
կակիրներ հանրային իշխանության քաղաքակա-  
նությանը<sup>22</sup>: Կարծում ենք, որ, եթե հանրաքվեի  
ցանկացած մողելի կառուցվածքում նախատես-  
ված չէ հանրաքվեի նախաձեռնում քաղաքացինե-  
րի կողմից, ուրեմն հանրաքվեի ինստիտուտը լիար-  
ժեք համարել չի կարելի<sup>23</sup>: Այդպիսի իրավական  
լուծման դեպքում հանրաքվեն իշխանության քնա-  
հանույթից կախված քաղաքական միջոց է, այլ ոչ  
թե ժողովրդաիշխանության արդյունավետ և գոր-  
ծուն ձև:

գ.Վ. Սինցովն աշխարհի երկրների օրենսդ-  
րության վերլուծության իման վրա հանրագրային  
հանրաքվեները բաժանում են երեք տեսակի՝

ա) քաղաքացիները նախաձեռնում են ոչ մի-  
այն հանրաքվեի անցկացումը, այլև քվեարկության  
դրվող ակտի նախագիծը<sup>24</sup>: Հանրաքվեի այս տեսա-  
կը միավորում է անմիջական ժողովրդավարության  
երկու ձևերը՝ հանրաքվեն և ժողովրդական օրենսդ-  
րական նախաձեռնությունը<sup>25</sup>,

բ) քաղաքացիների նախաձեռնած հանրաքվե,  
որին քվեարկվում է ընդունված, սակայն ուժի մեջ  
չմտած խորհրդարանական օրենքը<sup>26</sup>,

գ) «ժողովրդական վետո» կամ հանրաքվե,  
որը նախաձեռնում են քաղաքացիները և քվեար-  
կության առարկան արդեն ընդունված ու գործող  
օրենքը է: Անվանում են նաև մերժողական վետո<sup>27</sup>:

Այսպիսով, հանրաքվեի իրավական ինստի-  
տուտի արդյունավետության ու որպես ժողովրդա-  
վարության անմիջական ձևի գործունության գնա-  
հատականը պետք է կառուցվի միայն դրա կոնկ-  
րետ հատկանիշների յուրահատուկ հավաքածուի  
պարզուցման միջոցով: Այդպիսի հիմնական  
հատկանիշներ են ծառայում հետևյալ իրավական  
չափանիշները՝

ա) հանրաքվեի անցկացման մակարդակը,

բ) հանրաքվեի անցկացման պարտադիրու-  
թյունը,

գ) հանրաքվեի անցկացման առարկան,

դ) հանրաքվեի արդյունքների իրավական  
նշանակությունը,

ե) հանրաքվեի անցկացման նախաձեռնու-  
թյան լնիացակարգը,

զ) հանրաքվեի քորումի և որոշման ընդուն-  
ման անհրաժեշտ ձայնների քանակը,

է) հանրաքվեի հիմնական չափանիշների  
պատշաճ կարգավորման նորմատիվ ձևը՝ աղբյու-  
րը:

Այս հատկանիշներն ունեն կարևոր տեսական  
նշանակություն, այսինքն՝ դրանք կարող են ծառա-  
յել կոնկրետ հիմքեր հանրաքվեի իրավական ինս-  
տիտուտի տեսական վերլուծության համար, այդ  
հատկանիշներով հանրաքվեների տեսակների դա-  
սակարգման և այդ բնույթի տեսական այլ հարցերի  
լուծման համար, ինչը և անում են հանրաքվեի ինս-  
տիտուտը հետազոտողների մեծ մասը: Սակայն  
այդ հատկանիշները և դրանք բնութագրող չափա-  
նիշները պետք է օգտագործել նաև գործնական  
նպատակներով՝ դրանց միջոցով գրեթե մաթեմա-  
տիկական ճշգրտությամբ գնահատել որևէ երկրում  
հանրաքվեի կոնկրետ մողելը, որոշել դրա անարդ-  
յունավետությունը, գործունությունը, գոյության

նպատակահարմարությունը: Այսպես օրինակ՝ հանրաքվեի հիմնական չափանիշների կարգավորման նորմատիվ ձևը, որպես հանրաքվեի հատկանիշ, վերլուծելիս կարելի է պարզել հնարավոր իրավակարգավորմուների հետևյալ տարրերակները՝

ա) երկրում առկա է հանրաքվեի հիմնական, կարևոր նշանակություն ունեցող բովանդակային չափանիշների, սկզբունքային հարցերի հիմունքների պատշաճ սահմանադրական ամրագրում,

բ) երկրում չկա նշված հարցերի պատշաճ սահմանադրական ամրագրում, կամ էլ հանրաքվեն ունի սահմանադրական ամրագրում, սակայն դեկլարատիվ կերպով, առանց արդյունավետության վերը նշված չափանիշների սահմանադրական կոնկրետացման, ինչը գրեթե հավասարագոր է կարգավորված չիմելուն, քանզի չկա սահմանադրական իրավական որոշակիություն: Վերջինս ստեղծում է հանրաքվեի հիմնական հատկանիշների պատշաճ բովանդակության խեղաքյուրման վտանգ:

Այսպիսով, ենթադրվում է, որ հանրաքվեի իդեալական մոդելին բնորոշ է հիմնական, կարևոր նշանակություն ունեցող բովանդակային չափանիշների, սկզբունքային հարցերի հիմունքների պատշաճ սահմանադրական ամրագրումը: Սակայն իրականում որևէ երկրի հանրաքվեի կոնկրետ մոդելում դա կարող է արտահայտված չիմել: Հետևաբար, եթե տվյալ իրական կոնկրետ մոդելում կա պատշաճ սահմանադրական կարգավորում, ապա հանրաքվեի այդ իրական մոդելը ստանում է 1 միավոր, իսկ բացակայության դեպքում՝ միավոր չի ստանում: Այս մոտեցման հիման վրա կարելի է կառուցել օրինակ՝ համազգային հանրաքվեի իդե-

ալական մոդելի և իրական, օրենսդրությամբ ամրագված մոդելի համեմատական աղյուսակ: «Իդեալական մոդելը» հանրաքվեի տարրերակն է, որում հանրաքվեի բովանդակությունը կազմող հիմնական իրավական չափանիշները դրսերված են առավել լրիվությամբ, ինչքան որ հնարավոր է՝ ազգային-պետական առանձնահատկություններով պայմանավորված: Ամեն մի բովանդակային իրավական չափանիշ կարող է դրսերվել մի քանի ձևով, օրինակ՝ Հայաստանում ըստ հանրաքվեի անցկացման մակարդակի հնարավոր ցուցանիշներ են ազգային, մարզային, Երևան քաղաքի, համայնքային, միջհամայնքային հանրաքվեները, որոնցից ամեն մեկն իդեալական տարրերակի այդ չափանիշին բերում է միավոր, արդյունքում՝ 5 միավոր: Կոնկրետ օրենքով ամրագրված, հիմնադրված հանրաքվեի իրավական գործող մոդելին կարող է բնութագրական լինել միայն համազգային հանրաքվեն: Հետևաբար, այդ իրական մոդելը նշված ցուցանիշով ստանում է 1 միավոր դրա համար և 0՝ մնացած մակարդակների բացակայության համար: Այսպիսի տեսագործնական մոտեցմամբ հանրաքվեի ինստիտուտի հետազոտությունը հնարավորություն կտա բացահայտելու հանրաքվեի ինստիտուտի ցանկացած՝ ինչպես ներկա, այնպես էլ ապագա մոդելի արդյունավետությունը, գործունությունը, գոյության նպատակահարմարությունը, ինչպես նաև կնախանշի հանրաքվեի ինստիտուտի կատարելագործման սահմանադրական-օրենսդրական ուղղությունը:

<sup>1</sup> Տե՛ս, Սինցով Գ.Վ. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 17:

<sup>2</sup> Տե՛ս, Պետություն և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 5-21:

<sup>3</sup> Հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը կարևորում է նաև Գ. Դանիելյանը, որը իրավահամեմատական վերլուծության հիման վրա առաջարկում է որոշել և Սահմանադրությամբ ամրագրել հատկա, միասնական չափանիշներ այդ հարցում (տե՛ս, Գ. Դանիելյան «Հանրաքվեի, որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները», Պետություն և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 5-21):

<sup>4</sup> Տե՛ս, Սինցով Գ.Վ. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 14, 72-85:

<sup>5</sup> Տե՛ս, Սինցով Գ.Վ. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 14-15:

<sup>6</sup> Տե՛ս, Սինցով Գ.Վ. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 74; Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, С. 81-82.

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

<sup>7</sup> Արդի աշխարհի նոյեմբերկան ժողովրդավարական երկրներում ավելի շատ տարածված են տեղական հանրաքվեները, քան համապետականը: Դա բացատրվում է նրանով, որ այդպես լուծվող հարցերը շատ ավելի մուտ և հոգեհարազատ են ընտրողներին, քան համապետականները, որոնք, որպես կանոն, պահանջում են արեստավարժություն և հասուն տեղեկույթի հասանելիություն: Հենց այդ պատճառով են բացատրվում համազային հանրաքվեի ամրագրման փորձերի ձախողությունը ԱՄՆ-ում (տե՛ս, Ռудենկո Բ., Կոնստитуционные модели референдума в странах Европейского союза, Швейцарии и России // Конституционное право. Восточноевропейское обозрение. М., 2003, ном. 1, С. 10).

<sup>8</sup> Տե՛ս, Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 76.

<sup>9</sup> Տե՛ս, Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, С. 69.

<sup>10</sup> Տե՛ս, Конституции буржуазных государств. М., 1982, С. 262, 325.

<sup>11</sup> Տե՛ս, Վենետիկի հանձնաժողովի 2009 թ. հունվարի 20-ի «Հանրաքվեի լավագույն փորձի մասին» թիվ CDL-AD(2007)008rev եղակացությունը, կետ 8:

<sup>12</sup> Վ.Վ. Կոմարովսան այս տեսակի հանրաքվեների դասակարգման չափանիշ է համարում «քովանդակությունը» և այդ հիմքով առանձնացնում է սահմանադրական, օրենսդրական, միջազգային-իրավական, վարչական-իրավական հանրաքվեները, որոնք տարբերվում են անցկացման նախաձեռնության սորյեկտների շրջանակով, անցկացման ընթացակարգով (տե՛ս Կомарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, С. 72):

<sup>13</sup> Այլ հանրաքվեներից կարեոր են նաև որոշակի հիմքերով, առաջնային մանդատ ունեցող իշխանության մարմինների լիազորությունների դադարման, ինչպես նաև՝ վատահության քվե տալու հարցերով հանրաքվեները, որոնք կարեոր դեռ են խաղում քաղաքական ճգնաժամերի մեջմացման գործընթացում: Այդ մասին մանրամասն տե՛ս, Գ. Դանիելյան «Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները», Պետություն և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 5:

<sup>14</sup> Տե՛ս, Конституция Республики Италия, 1984, (<http://www.uznal.org/constitution.pdf>, հոդված 75):

<sup>15</sup> Տե՛ս, Конституция Французской Республики, 1958, (<http://www.uznal.org/constitution.pdf>, հոդված 11):

<sup>16</sup> Տե՛ս, Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, С. 64:

<sup>17</sup> Խորհրդատվական հանրաքվեն ամրագրված է Իսպանիայում (տե՛ս, Spanish Constitution (Ratified by the spanish people in the referendum of December 7, 1978, [http://www.congreso.es/portal/page/portal/Congreso/Congreso/Hist\\_Normas/Norm/const\\_espa\\_texto\\_ingles\\_0.pdf](http://www.congreso.es/portal/page/portal/Congreso/Congreso/Hist_Normas/Norm/const_espa_texto_ingles_0.pdf), 04. 04. 2014, 17:18), Շվեդիայում («Կառավարման ձևի մասին» 1974 թ. Ակտով (տե՛ս The Constitution of the Kingdom of Sweden. The Instrument of Government (SFS nr: 1974:152, <http://www.parliament.am/library/sahmanadrutyunner/Sweden.pdf>, 10. 06. 2016, 14:58):

<sup>18</sup> Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված է միայն որոշիչ հանրաքվեն (տե՛ս, Федеральный конституционный закон РФ от 28 июня 2004 года N 5-ФЗ “О референдуме Российской Федерации” (С изменениями и дополнениями от 6 апреля 2015 г.), ч. 2 ст. 83).

<sup>19</sup> «Ժողովրդի նախաձեռնությամբ անցկացվող համառկահնական հանրաքվեի վերաբերյալ» Ուկրաինայի սահմանադրական դատարանի 2000 թ. մարտի 27-ի որոշմանմաբ արձանագրվել է, որ «Ժողովրդի կամքը չի կարող կրել խորհրդատվական բնույթ: Ուստի, խորհրդատվական հանրաքվեները կորցրել են իրենց արդիականությունը Ուկրաինայում» (տե՛ս, [http://www.uchebnikionline.com/pravo/referendne\\_pravo\\_ukrayini\\_-\\_pogorilko\\_vf\\_vid\\_i\\_referendumiv\\_ukrayini.htm](http://www.uchebnikionline.com/pravo/referendne_pravo_ukrayini_-_pogorilko_vf_vid_i_referendumiv_ukrayini.htm) (02. 02. 2015, 11:50):

<sup>20</sup> Տե՛ս, Комарова В.В., Референдумный процесс в Российской Федерации. М., 2004.; Мамичев В.Н., Референдум в законодательстве зарубежных стран и России: историко-правовое исследование: дисс... канд. юрид. наук. Ставрополь, 2000.; Руденкo B., Конституционные модели референдума в странах Европейского Союза, Швейцарии и России // Конституционное право: Восточноевропейское Обозрение. М., 2003. N 1 և այլն:

<sup>21</sup> Տե՛ս, Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 48:

<sup>22</sup> Հանրագրային հանրաքվեի ինստիտուտը հայտնի է դեռ 18-րդ դարից, երբ 1715 թ. ԱՄՆ-ի Սասաշուտերս նահանգում ընդունվեց օրենք այդպիսի տեղական հանրաքվեի մասին: 1898 թ. Նման օրենք ընդունեց Դակուտա նահանգում: Եվրոպայում առաջին անգամ հանրագրային հանրաքվեն ամրագրվել է 1891 թ. Շվեյցարիայում, որտեղ էլ այն բոլոր մակարդակներում ամենալայն կերպով կիրառվող ինստիտուտ է: Այդ ինստիտուտը տարածված է նաև ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Իտալիայում (տե՛ս, Սինцов Գ.В., Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, С. 48):

<sup>23</sup> Քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի ինստիտուտի ներմուծումը և դրա ընթացիկ օրենսդրական կարգավորումը կարեորում են նաև այլ հետազատողներ (տե՛ս, Գ. Դանիելյան «Հանրաքվեի, որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները», Պետություն և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 17-18:

<sup>24</sup> Հանրաքվեի այս տեսակը հիմնադրվել է Ֆրանսիայում (Սահմանադրության 59 հոդվ.) և տարածվել է ԱՄՆ-ի նահանգներում, Շվեյցարիայում, որոշ հետազատողներում: Օրինակ՝ Սլովակիայի 1992 թ. Սահմանադրության համաձայն նախագահը պարտավոր է նշանակել հանրաքվե՝ 350 հազար քաղաքացիների

ստորագրությամբ հանրագիր ստանալու դեպքում: Վերջին տարիներին ԱՄՆ-ում հանրագրային հանրարվեների առարկա են դաշնում մղավաղերը, արորտները, կանանց ընտրական իրավունքները, սեռական փորձամասնությունների իրավունքները, մահապատիժը և այլն (տե՛ս, Զimmerman Ջ. Прямая демократия в Соединенных Штатах Америки: опыт и проблемы / Вестник МГУ. Сер. «Право». 1991. N 5. С. 53, Васильев В.И. Прямая демократия: опыт Калифорнии / Государство и право. 1994. N 1. С. 119):

<sup>25</sup> Դրանց տարրերությունների մասին տե՛ս, Иностранные конституционные права / Под ред. В.В. Маклакова. М., 1997.

<sup>26</sup> Մինչև օրենքի ուժի մեջ մտնելը հնարավոր է հանրագրի ներկայացում՝ որով պահանջվում է անցկացնել հանրարվե այդ օրենքի շուրջ: Նման հանրարվեի անցկացման հնարավորությունը 500 հազ. ստորագրության առկայության դեպքում նախատեսված է Իտալիայի Սահմանդրության 138 հոդվածում (տե՛ս, Конституция Республики Италия, 1948, (<http://www.uznal.org/constitution.Php>):

<sup>27</sup> Նախատեսված է Իտալիայի Սահմանադրության 75 հոդվածով՝ 500 հազ. քաղաքացիների ստորագրության կամ 5 մարզային խորհուրդների պահանջով: ԱՄՆ-ի տարբեր նահանգներում օրենքի մերժման համար անհրաժեշտ է քվերակողները 30 մինչը 50 % ձայնները: Ըստ որում 6 նահանգներում օրենսդիրը կարող է հաշվի շառնել հանրարվեի արդյունքները (տե՛ս, Զimmerman Ջ. Прямая демократия в Соединенных Штатах Америки: опыт и проблемы / Вестник МГУ. Сер. «Право». 1991. N 5. С. 53):

Լիլիթ Մելիքսետյան

Аспирант академии государственного управления РА

## РЕЗЮМЕ

### *Правовые критерии эффективности референдума как непосредственной формы народовластия*

В статье автор выдвигает основные правовые критерии эффективности и действенности референдума как правового института и на этой основе строит «идеальную модель» референдума, в котором составляющие содержание референдума основные правовые критерии выражены полностью.

Эти критерии дают возможность мерить проявление признаков идеальной модели в реальной модели, диагностировать степень эффективности и действенности реального института референдума, выявить конституционно-законодательные пути совершенствования института.

**Ключевые слова:** референдум, эффективность, идеальная модель, реальная модель, правовой критерий, действенный институт, декларативное регулирование.

Lilit Meliksetyan

PhD student of Public administration academy of RA

## SUMMARY

### *Legal standarts of effectiveness of referendum as a form of direct democracy*

In this article the author puts forward basic legal standarts of effectiveness of referendum as a legal institution and on the basis of it constructs an «ideal model» of referendum, a type of referendum which describes basic legal standarts of referendum more full.

These standarts give opportunities to measure the attributes of ideal model of referendum on real model, to diagnose its effectiveness and degree of use as a legal institution,to presage the constitutional-legislative ways of improvement of the institution.

**Keywords:** referendum,effectiveness,ideal model,real model,legal standart,institution activity, declaratory approach.